Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 286 - Ա
որոշման

«ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության տարբեր գյուղական բնակավայրերում սոցիալապես անապահով ընտանիքներին արտոնյալ պայմաններով տրամադրել արևային ջրատաքացուցիչներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	«LITTLE BRIDGE SWITZERLAND» NGO, Նախագահ՝ Հիլդե Ադեհայդ Քինդ, Շվեցարիա (Giacometti stasse 134.7000 Chur, FO0569480):
4.	Ծրագրի կատարողը	«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպություն, իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան, Ջ. Սարկավագի 129/5, ՀՎՀՀ՝ 01003187, հեռ՝ 010-516-044:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր, Մեծ Պառնի, Շենավան և Գեղասար բնակավայրեր: Բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում 14,000,000 դրամ :
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության տարածքում անապահով ընտանիքներ, որոնց ընտրությունը կատարվում է կազմակերպության կողմից, ուսումնասիրությունների արդյունքում:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի ապրիլի 15-ից մինչև 2024 թվականի ապրիլի 15-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ընտրված ընտանիքների հետ կնքվում են փոխառության պայմանագրեր՝ անտոկոս մարման պայմանով, որի արդյունքում ձևավորվելու է շրջանառու ֆոնդ, ուղղված նույն նպատակին՝ արևային ջրատաքացուցիչ համակարգերի ձեռքբերմանը և նույն պայմաններով գյուղական համայնքների անապահով ընտանիքներին տրամադրմանը:

		Արևային ջրատաքացուցիչները ձեռք բերելու համար կնքվել է փոխըմբռնման հուշագիր 14,000,000 դրամի չափով, տեղադրման միջոցառումները կկատարվեն երկու ամսվա ընթաց-քում: 38 հատ ջրատաքացուցիչ կտեղադրվի կազմակերպության կողմից ընտրված սոցիալապես անապահով ընտանիքների համար՝ 2021 թվականի ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը
10.	Ձեռք բերվող, ներմուծվող, ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Արևային ջրատաքացուցիչները ձեռք բերելու համար կնքվել է փոխըմբռնման հուշագիր 14,000,000 միլոն դրամի չափով: Կախված շահառու ընտանիքների քանակությունից տեղադրվելու է 200, 250 և 300 լիտրանոց արևային ջրատաքացուցիչներ: Յուրաքանչյուր ջրատաքացուցիչը տեղադրվում է 10 օրվա ընթացքում: Ջրատաքացուցիչները հինգ տարով սպասարկման և թերությունների վերացման երաշիքի ներքո են լինելու և անխափան աշխատելու համար ունենալու են թերությունների վերացման եռօրյա արձագանքման պայմանագիր:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականցման ընթացքում համագործակցելու ենք Լոռու մարզի Ծաղկաբեր, Մեծ Պառնի, Շենավան և Գեղասար բնակավայրերի ղեկավարության հետ: Հետագայում համագործակցությունը կընդլայնվի:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպություն աշխատակազմի մշտադիտարկման միջոցով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվի տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

08.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ